



# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

---

Յետազոտության թեման՝ **«Խճանկար մեթոդը, որպես սովորողների  
առաջադիմության բարձրացման միջոց»:**

**Յետազոտող ուսուցիչ՝** Չառա Մուրադյան

Արմավիրի Խանջյանի Ա.Բ. Յակոբյանի անվան միջնակարգ դպրոց

**Մենթոր ուսուցիչ՝** Նարինե Վասիլյան

ԱՐՄԱՎԻՐ 2022



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան -----	Էջ 3
2. Գրականության ակնարկ -----	Էջ 5
3. Գործնական համատեքստ -----	Էջ 7
4. Եզրահանգումներ -----	Էջ 8
5. Գրականության ցանկ -----	Էջ 9
6. Դասապլաններ -----	Էջ 10



## 1.ՆԱԽԱԲԱՆ

Թող աշակերտը չսովորի գիտությունը,

թող նա հորինի այն ինքնուրույն:

**Ժան Ժակ Ռուսո**


Ժամանակակից տեղեկատվական քաղաքակրթության դարաշրջանում անհրաժեշտ է աշխատել այնպիսի պայմաններում, երբ գիտելիքներն արագ են հնանում, քան հասցնում են յուրացվել սովորողի կողմից, անհրաժեշտություն է առաջանում ստեղծագործ անհատի պատրաստման համար ուսուցման նոր ձևերի և մեթոդների մշակում, որն ի վիճակի կլինի անընդհատ զարգանալ և ինքնակատարելագործվել: Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է, մարդուն այնպես դաստիարակելը, որ համապատասխանի ժամանակակից պահանջներին: Այդ պատճառով ուսումնա այնպես պետք է կազմակերպել, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը, աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը:

Մեթոդի ընտրությամբ է պայմանավորված սովորողի կողմից իրականացվող ինքնուսուցման և ինքնադաստիարակության գործընթացների արդյունավետությունը, որը գուցե հետագայում նրան հնարավորություն կտա առանձնանալու հասարակության մեջ՝ ըստ իր ձեռք բերած անձնային բարձր որակների, դիրքորոշումների, գործունեության սկզբունքների և դրանց արդյունավետության տեսանկյունից կյանքում ապրելու իր մեթոդն ընտրելու: Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Սկատկինը, **մեթոդը դա ճանապարհ է, որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն, նրա զարգացման ուղի:**

Սովորողներին դեպի գիտելիքն ու կրթության լուսավոր աշխարհի տանելու համար ընտրել են «Խճանկար» մեթոդը: Խճանկարը համագործակցային մեթոդ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ, զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Դասը ստեղծագործական գործընթաց է, մեթոդները՝ նպատակին հասնելու ուղի, ճանապարհ, իսկ յուրաքանչյուր ճանապարհ ունի իր դժվարությունները: Իմ նպատակն է «Խճանկար» մեթոդի կիրառմամբ նպաստել սովորողների առաջադիմության բարձրացմանը:



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ



### ԽՃԱՆԿԱՐ ՄԵԹՈԴ

#### **Չետագոտական աշխատանքի`**

**Նպատակը** - «Խճանկար» մեթոդի կիրառմամբ նպաստել սովորողների առաջընթացին ուսումնական գործընթացում

**Խնդիրը** - դիտարկել և հիմնավորել խճանկար մեթոդի արդյունավետությունը ուսուցման գործընթացում

**Օբյեկտը** – Դասարան

**Միջոցը** - «Խճանկար» -ը, որպես համագործակցային մեթոդ



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԼԱՐԿ

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններ, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդավարական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու հնարավորություն է տալիս:<sup>1</sup>

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդպիսի մեթոդներից է խճանկարը:<sup>2</sup>

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել [Տեխասի A&M համալսարանում](#)՝ [Էլիոթ Արոնսոնի](#) և նրա գործընկերների կողմից այնուհետև լրամշակվել է Սլավինի և նրա գործընկերների կողմից: 1986 թ. Սլավինը փոփոխություններ մտցրեց մեթոդի մեջ յուրաքանչյուր խմբում սովորողների թիվը հասցնելով հինգի:<sup>3</sup> Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ: Խճանկար մեթոդի փուլերն են՝

- 1 • **Նյութի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքում**
- 2 • **Աշխատանք փորձագիտական խմբում**
- 3 • **Աշխատանք ուսումնական խմբում**
- 4 • **Ավարտական աշխատանք**
- 5 • **Ամփոփում**

1. Վարդումյան Ս., Ջադիսյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյան տապան» հրատ., 2005, 402 էջ:  
 2. Վեսա Պուրոկուրու- Համագործակցային ուսուցում  
 3. Ведерникова Л.В., Поворознюк О.А., Еланцева С.А. Практико - ориентированная подготовка педагога: учебное пособие для вузов. – М.: Издательство Юрайт, 2020



Խճանկար մեթոդի անվանումը հենց բնութագրում է մեթոդը: Սովորողները խմբային համագործակցության միջոցով աշատում են միևնույն թեմայի շուրջ առանձին ուղղություններով, որից հետո բոլոր խմբերի համագործակցային աշխատանքի արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Խճանկար մեթոդի կիրառումը հնարավորություն կտա յուրաքանչյուր սովորողի զգալու, որ իր աշխատանքն իրեն հաջողության հասցրեց, կկարողանա իր աշխատանքով ապրել, վայելել և

հպարտանալ: Դա դրական դրդապատճառ կհանդիսանա հետագա աշխատանքներում մեծ ոգևորություն և ջանքեր թափելու, դժվարությունները հաղթահարելու իր հնարավորություններում վստահություն ունենալու: Նա համոզված կլինի, որ եթե մենակ չկարողանա հաղթանակի հասնել, ապա ընկերներով, խմբի անդամների հետ միասին անպայման դրական արդյունքի կհասնեն, որը նրան առաջ գնալու, դժվարությունները հաղթահարելու ուժ կտա:


*«Եթե ինձ հարցնեն, թե ո՞րն է կրթության նպատակը, կասեմ՝ սովորող ստեղծելը: Եթե դպրոցական կրթության վերջում չունենք սովորող, այլ մարդ, որի համար այդ գործընթացը դարձել է ամենօրյա գործունեություն՝ անկախ գիտելիքների պաշարից պարտված ենք»:*

**Կրթ. փորձագետ՝ Սերոբ Խաչատրյան**


Ես նույնպես համակարծիք եմ այդ մտքի հետ: Ուստի գիտելիքների ձեռք բերման և ուսնագիտության այս մենամարտում հաղթող դուրս գանք և օգնենք պատրաստել կրթված և գիտակ սերունդ:

Հետազոտությունը իրականացնելու եմ Արմավիրի էսանջյանի Ա.Բ. Հկոբյանի անվան միջնակարգ դպրոցի VI դասարանում, որտեղ սովորում եմ 18 աշակերտ:

Աշակերտների հետաքրքրությունները և առաջադիմությունը տարբեր են: Աշակերտները ակտիվ են, պատրաստակամ յուրաքանչյուր դասաժամի նոր գիտելիքներ ձեռք բերելու, այդ իսկ պատճառով հետազոտության իրականացումը այս դասարանում կտա ցանկալի արդյունք: Հետազոտական աշխատանքը իրականացնելու համար ընտրելու եմ «Հայկական լեռնաշխարհը հայերի հայրենիք» թեման: Հետազոտությունը իրականացնելու եմ երկու դասաժամի ընթացքում: Որպես վերջնարդյունք ակնկալում եմ, որ խճանկար մեթոդով «Հայկական լեռնաշխարհը հայերի հայրենիք» թեման ուսումնասիրելուց հետո աշակերտները հիմնավոր գիտելիքներ ձեռք կբերեն իրենց պատմական հայրենիքի սահմանների, գետերի, լճերի, վարչական բաժանման մասին և կարժևորեն Հայկական լեռնաշխարհը որպես հայերի հնագույն հայրենիք և ծագումնավայր լինելու հանգամանքը:



Չետագոտական աշխատանքի արդյունքները համեմատելուց հետո I և II դասաժամերի արդյունքները պարզելու են քարտային աշխատանքի միջոցով: Աշխատանքի արդյունքները համեմատելուց հետո ակնկալում են, որ համագործակցային ուսուցումը խճանկար մեթոդի իրականացմամբ հնարավորություն կտա հասնելու նոր ու կարևոր կրթական նպատակների իրականացմանը՝



Սովորողների կատարած աշատանքները գնահատելուց հետո կկազմեն դիագրամ համապատասխան ցուցանիշներով: Ակնկալում են հետագոտության վերջում հասնել նախատեսվող վերջնարդյունքներին:



1. Ադամյան Ն. Վ., «Չետագոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման մեթոդիկա», 2019
2. ԶԿՀ հետագոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց:
3. Վարդումյան Ս. , Ջաղինյան Ն., Չարությունյան Լ., Գարի Վարելլա, «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:
4. Վեսա Պուրոկուրու, «Չամագործակցային ուսուցում»
5. Սահակյան Վ. Ա., «Չամագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին» 2020,
6. Չովհաննիսյան Ա., Չարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրոկուրու Վ., Չամագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006,
7. Ведерникова Л.В., Поворознюк О.А., Еланцева С.А. Практико - ориентированная подготовка педагога: учебное пособие для вузов. – М.: Издательство Юрайт, 2020,



## ԴԱՍԱՊԼԱՆՆԵՐ

### Դասապլան 1

**Ուսուցիչ՝** Չառա Մուրադյան

**Առարկա՝** Հայոց պատմություն

**Դասարան՝** VI

<b>Թեմա՝</b>	<i>Հայկական լեռնաշխարհը հայերի հայրենիք</i>
<b>Օգտագործվող նյութեր՝</b>	<i>դասագիրք, տետր, քարտեզ, նկարելուկ</i>
<b>Հիմնական հասկացություններ</b>	<i>Հայկական լեռնաշխարհ, «Լեռնային կղզի», Սոմխեթի, հայերի հայրենիք</i>
<b>Դասի նպատակը՝</b>	<i>Համագործակցային ուսուցման միջոցով, խճանկար մեթոդի կիրառմամբ ծանոթացնել Հայկական լեռնաշխարհին, լեռնաշխարհի սահմաններին, գետերին, լճերին, լեռնագագաթներին, վարչական բաժանմանը: Գիտելիք տալ տալ Հայկական լեռնաշխարհի, որպես հայերի հնագույն հայրենիքի և ծագումնաբանական լինելու մասին:</i>
	<b>Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</b>
<b>Վերջնարդյունքները</b>	<p><b>Աջակերտը կկարողանա՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Նկարագրել Հայկական լեռնաշխարհը, դիրքը, սահմանները, ցույց տալ քարտեզի վրա</li> <li>▪ թվարկել Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթները, գետերը, լճերը</li> <li>▪ թվարկել Մեծ Հայքի նահանգները, ցույց տալ քարտեզի վրա</li> <li>▪ արժևորել ՝ Հայկական լեռնաշխարհի, որպես հայերի հանգույն հայրենիք և ծագումնաբանական լինելու հանգամանքը</li> </ul>

<b>Գործողություններ (Ժամ/ տևողություն)</b>	<b>Պլանավորված ՈւԳ ռազմավարություններ</b>	<b>Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը Նպաստում է դասի Նպատակին)</b>
<p><b><u>Կազմակերպչական մաս (2 թույն)</u></b></p> <p><b><u>Անցած Նյութի կրկնություն (3 թույն)</u></b></p> <p><b><u>Նոր նյութի հաղորդում համագործակցային «խճանկար» մեթոդով (10 թույն)</u></b></p>	<p>հաշվառում, կազմակերպչական աշխատանքներ</p> <p>Կառաջադրեմ հարցեր հայրենագիտություն առարկայից, թեմայի վերաբերյալ սովորողների գիտելիքները վեր հանելու համար:</p> <p>Կներկայացնեմ թեման և կբացատրեմ, որ աշխատելու ենք համագործակցային խմբերով: Սովորողներին կբաժանեմ խմբերի, կտամ նրանց համարներ: Սովորողներին տրված համարներով կկազմեմ փորձագիտական խմբեր, հնարավորություն տալով ընտրել թեմայի ենթափեմաներից մեկը: Կորոշեմ գնահատման չափանիշները:</p>	<p>1) Ի՞նչ անուններ են տրվել Հայաստանին հին Ժամանակներում:</p> <p>2) Հայկական լեռնաշխարհի ի՞նչ լեռնագագաթների անուններ գիտեք :</p> <p>3) Ի՞նչ լճերի անուններ գիտեք:</p> <p>4) Որ նահանգների տարած- քի հիման վրա է ձևավորվել Հայաստանի Հանրապետու- թյունը:</p> <p>Նյութի ինքնուրույն ուսում- նասիրություն: Բացատրա- կան աշխատանքի, վերլուծության իրականա- ցում, սովորածը ուսումնա- կան խմբի ներսում հաղորդելու համար:</p>

<p><b><u>Նյութի տեղեկատվության հաղորդում միմյանց (10 րոպե)</u></b></p>	<p>Նյութը ուսումնասիրելուց հետո սովորողները կվերադառնան իրենց նախկին ուսումնական խմբեր և յուրաքանչյուր խումբ իր սովորածը կբացատրի խմբի մյուս անդամներին: Կպարզաբանեմ անհասկանալի հարցերը, որոնք կառաջանան սովորողների մոտ:</p>	<p>Տեղեկատվության փոխանցում, հաղորդում միմյանց: Քարտեզի պատրաստում</p>
<p><b><u>Քարտեզի պատրաստում (5-7 րոպե)</u></b></p>	<p>Ուսումնական խմբերին կհանձնարարեմ կազմել Հայկական լեռնաշխարհի քարտեզը, հաջորդ դասաժամին ներկայացնելու համար: Յուրաքանչյուր խումբ աշխատելու է տարբեր թեմաներով՝ աշխարհագրական դիրք, սահմաններ, գետեր, լճեր, վարչական բաժանում: Դասը կամփոփեմ իմ կողմից նախապես կազմված նկարելուկների միջոցով:</p>	
<p><b><u>Գնահատում (2-3 րոպե)</u></b></p>	<p>Կիրականացնեմ ձևավորող գնահատում</p>	
<p><b><u>Տնային հանձնարարություն (2 րոպե)</u></b></p>	<p>Կահանձնարարեմ կրկնել դասը և կհանձնարարեմ պատրաստել լրացուցիչ տեղեկատվական նյութ Հայկական լեռնաշխարհի մասին:</p>	



Գործողություններ (Ժամ/ տևողություն)	Պլանավորված ՈԼԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը Նպաստում է դասի Նպատակին)
<p><b><u>Կազմակերպչական մաս (2 թույն)</u></b></p> <p><b><u>Աշխատանքի Ներկայացում (15 թույն )</u></b></p>	<p>հաշվառում, կազմակերպչական աշխատանքներ</p> <p>Յուրաքանչյուր ուսումնական խումբ կներկայացնի նախորդ դասին կատարած իր աշխատանքը և տնային աշխատանքը յլրացուցիչ տեղեկություն Հայկական լեռնաշխարհի մասին:</p>	<p>Սովորողները կբացատրեն, կլրացնեն միմյանց, կվերլուծեն իրենց կատա- րած աշխատանքը և վերջում կընտրեն ամենա- լավ աշխատանքը:</p>
<p><b><u>Քարտային աշխատանքի կատարում (20 թույն)</u></b></p>	<p>Կպատրաստեմ թեմային վերաբերող քարտեր և կկատարենք քարտային աշխատանք թեմայի յուրացվածության աստիճանը ստուգելու նպատակով: Ավարտից հետո կստուգեմ աշխատանքը և կգնահատեմ սովորողներին:</p>	<p>Կկիրառեն իրենց ձեռք բերած գիտելիքները, քարտային աշխատանք իրականացնելու համար:</p>

<p><b>Գնահատում</b> <b>(2-3 թույլ)</b></p>	<p>Կիրականացնեմ միավորային գնահատում, աշխատանքի արդյունքներից ելնելով: Վերջում սովորողներին կբաժանեմ հարցաթերթիկ, որտեղ նրանք կլրացնեն երկու նոր բան, որը սովորեցին թեմայից:</p> <p style="text-align: right;">Սմաթիվ: ___/___/___</p> <div style="border: 1px solid black; padding: 5px; margin: 10px auto; width: 80%;"> <p style="text-align: center; font-size: small;">Գրիր երկու նոր բան, որ սովորեցիր թեմայից</p> <p><input type="checkbox"/> _____</p> <p><input type="checkbox"/> _____</p> </div>	<p>Կնշվի, թե ով ինչպես աշխատեց, և ինչի վրա ուշադրություն դարձնեն հաջորդ համագործակցային աշխատանքի ժամանակ:</p>
<p><b>Տնային հանձնարարություն</b> <b>(2 թույլ)</b></p>	<p>Կահանձնարարեմ պատրաստել տեսանյութ, յուրաքանչյուր ուսումնական խմբի աշխատանքին համապատասխան:</p>	<p>ՏՀՏ-կիրառություն</p>